ընդարձակեալ 'ի նմա սենեակս և զխուցս 'ի բնակութիւն միաբանաց։

Յետ վախճանի Կիրակոս Պատրիարքի, Խորհրդական հարք եւ միաբանք Ս. Աթոռոյն գրեալ ծանուցին 'ի Կոստանդինուպոլիս առ Պատրիարքն եւ առ իշխանաւորս ազգին զվախճան Կիրակոսի և զընտրութիւն Յովհաննու Եպիսկոպոսի Մովսիսեան Զմիւռնացւոյ, որ Փոխանորդ էր 'ի մայրաքաղաքի անդ։ Եւ 'ի ժողովի հաւանեալ ազգայնոց ընդ ընտրութիւն նորին՝ ծանուցին 'ի Դուռն և առին զբերաթն Պատրիարքական ('ի 4 Յուլիսի · 1850)· և նորա կարգաւորեալ զգործս իւր անդ՝ մեկնեցաւ գնալ յԵրուսաղէմ ուղեկցութեամբ հրաւիրակ վարդապետաց, զորս յղեալ էին Աթոռայինք, եւ հասեալ նորա յԵրուսաղէմ, նստաւ հանդիսիւ յԱթոռ Պատրիարքութեան յաւուր տօնի Սրբոց Հրեշտակապետաց, ('ի 11 Նոյեմբեր ամսոյ), և ընկալաւ վարել զիշխանութիւն Պատրիարքութեան իւրոյ։

Գ Լ Ո Ւ Խ Կ.

Գործք Յովհաննու։ Վախճան Փոքր Եպիսկոպոսի։ Խնդիր Ս. Տեղեաց։ Աֆիֆ Պէյ։ Ժողով 'ի Ս. Յարութիւն և յապարանս Բդեշխին։ Հրաւիրակ Աբքայի 'ի ձեռս Յունաց։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Պատրիարք յառաջին ամի գահակալութեան իւրոյ եւ հիմն արկանել ընդարձակ եւ հոյակապ Պատրիարքարանի 'ի Թաղն Ս. Մինասայ, ձգեալ կամարս 'ի վերայ ճանապարհի և երկայնեալ 'ի պարտէզն դէպ յարեւմուտս· 'ի բարձրանալ հիմանց նորին, դժպատեհ իմն երեւեցաւ գործն յաչս Գլխաւորաց այլազգեաց, և կամեցեալ խափանել զայն՝ պատճառս յօդէին, թէ չէ օրէն առն այլազգւոյ տնցանել 'ի ներքոյ կամարաց՝ յորոց վերայ բնակին քրիստոնեայք, թէպէտեւ առաջի արար նոցա զհրաման Արքային վասն այնր՝ այլ չեղեւ լսելի· հարկ եղեւ 'ի ձեռն միջնորդաց շահել զնոսա, եւ յաճախել ընծայից, զիջան 'ի խստութենէ 'ի պատիւ երեսաց Պատ-